12-րդ շաբաթ

Թեմա՝ «Հայաստան և հայերեն»

Ա. Ստորև տրված հարցերի օգնությամբ կառուցել 5-10 որպե տևողությամբ բանավոր տեքստ և ներկայացնել այն լսարանին:

Հարցեր՝

1. Որտե՞ղ է գտնվում Հայաստանը:
2. Ի՞նչ բնություն ունի:
3. Ի՞նչ տեսարժան վայրեր կան Հայաստանում:

4. Որո՞նք են Հայաստանի քաղաքները:
5. Ովքե՞ր են ապրում Հայաստանում:
6. Ինչո՞վ են զբաղվում մարդիկ Հայաստանում:

7. Ի՞նչ հիմնական տարբերություններ կան ձեր երկրի և Հայաստանի միջև:
8. Ի՞նչ լեզվով են խոսում Հայաստանում:
9. Ի՞նչ գիտեք հայերենի պատմության մասին:
10. Ի՞նչ նմանություններ կան ձեր լեզվի և հայերենի միջև:

***

Տեքստ կազմելիս ըստ ցանկության օգտվել առաջարկվող բառերից, բառակապակցություններից և այլ արտահայտություններից:

Կիրառելի բառեր և արտահայտություններ՝

հանրապետություն	տարածք
լեռներ	ազգեր
լճեր	թանգարաններ
գետեր	փողոցներ
ձորեր	մշակույթ
վանքեր	արվեստ
բերդեր	արդյունաբերություն
խաչքարեր	տնտեսություն

***

Բ. Յուրաքանչյուր ուսանողի ներկայացրած տեքստի հիման վրա, այլ տեղեկություններ ստանալու կամ տրված տեղեկությունը ճշգրտելու նպատակով տալ և ստանալ լրացուցիչ հարցեր՝ երկխոսելով մյուս ուսանողների հետ:

Բնագրի նմուշ՝

Հայաստանը (պաշտոնական անվանումը՝ Հայաստանի Հանրապետություն), Իրանի, Չինաստանի, Հունաստանի, Եգիպտոսի և Ճապոնիայի հետ միասին, աշխարհի վեց հնագույն երկրների կազմում է, որոնք կարողացել են անցնել հազարամյակների միջով և հասնել մինչև մեր օրերը: Ինչպես նաև առաջին երկիրն է, որը քրիստոնեությունն ընդունել է որպես պետական կրոն: Գտնվում է արևմտյան Ասիայում, Անդրկովկասի հարավում: Սահմանակից է Վրաստանին (սահմանի երկարությունը՝ 219 կմ), Ադրբեջանին (566 կմ), Իրանին (44 կմ), Թուրքիային (311 կմ): Կառավարման

ձևը՝ նախագահական հանրապետություն: Նախագահն է Սերժ Ազատի Սարգսյանը:
Տարածքը՝ 29.743 քառ. կմ: Հայաստանի մայրաքաղաքն է Երևանը, զբաղեցնում է 300 քառ. կմ տարածք: Պետական լեզուն հայերենն է:
Հայաստանի Հանրապետությունն ունի 10 վարչական մարզ՝ Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Կոտայքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի, Վայոց ձորի, Տավուշի մարզերը և Երևան քաղաքը՝ որպես առանձին վարչական միավոր: Խոշոր քաղաքներն են՝ Երևան, Գյումրի, Վանաձոր, Կապան, Արմավիր, Գավառ, Էջմիածին, Իջևան, Հրազդան:
Ամենաբարձր լեռնագագաթն է Արագածը (4094 մետր): Սևանա լճի մակերեսը՝ 4.890 քառ. կմ, ծովի մակերևույթից բարձրությունը՝ 1900 մ:
Հայերեն (ավանդական՝ հայերէն), հնդեվրոպական լեզվաընտանիքի առանձին ճյուղ հանդիսացող լեզու:
Հայաստանի և Արցախի պետական լեզուն է:
Իր շուրջ հինգհազարամյա գոյության ընթացքում հայերենը շփվել է տարբեր ժողովուրդների, բազմաթիվ լեզուների հետ, սակայն պահպանել է իր ինքնուրույնությունը, քերականական կառուցվածքի և բառապաշարի (բառային ֆոնդի) ինքնատիպությունը:
Հայոց լեզվով ստեղծվել է մեծ գրականություն: Գրաբարով է ավանդված հայ հին պատմագրությունը, գիտափիլիսոփայական, մաթեմատիկական, բժշկագիտական, աստվածաբանական-դավանաբանական գրականությունը: Միջին գրական հայերենով են մեզ հասել միջնադարյան հայ քնարերգության գլուխգործոցները, բժշկագիտական, իրավագիտական նշանակալի աշխատություններ:
Գրական նոր հայերենի արևելահայերեն ու արևմտահայերեն գրական տարբերակներով ստեղծվել է գեղարվեստական, հրապարակախոսական ու գիտական բազմատիպ ու բազմաբնույթ հարուստ գրականություն:

Աղբյուրներ՝ https://explorearmenia.am/hy/information/about-armenia.html
hy.wikipedia.org/wiki/Հայերեն